ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 94-Ա

15 հոկտեմբերի 2018թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-053-0124-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 4.16065 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՅԻՏԱՅԻՆ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՎԱՐԴԱՆ ԱՂԲՅՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի մայիսի 3-ի թիվ 60-Ա հրամանով «Վարդան Աղբյուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ ընկերություն) տրամադրված օգտակար հանածոյի

արդյունահանման 2012 թվականի նոյեմբերի 6-ի ՇԱԹ-29/294 (նախկինը՝ 14/417) թույլտվությունը N ԼՎ-294 լեռնհատկացման ակտում և ընդերքօգտագործման 2012 թվականի նոյեմբերի 6-ի N ՊՎ-294 պայմանագրում կատարված փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 33 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 12-ի թիվ 14 որոշումը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-053-0124-0001- կադաստրային ծածկագրով 4.16065 հեկտար հողամասը դացիտային տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 49 տարի ժամկետով (մինչև՝ 2067 թվականի մայիսի 1-ը), յուրաքանչյուր 1 հեկտարի համար՝ տարեկան 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «Վարդան Աղբյուր» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ ընկերության միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 3

ԱՆՏՈՆՅԱՆ ՖՐՈՒՆԶԵ			
ԳԱԲՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ			V
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ			V
ԴՐՄԵՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ			V
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ			
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼՈՂՅԱ			
ՀԱՄԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ			
ՄԱԹՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ			
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			
ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ			
ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

«18» հոկտեմբերի 2018թվական

գյուղ Ախուրյան